ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 24 հունվարի 2023թ.

2023 թվականի հունվարի 24-ին, ժամը 14:30-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ եզրակացություններ տալու նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 90-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»*** և ***«Բյուրեղավան համայնքի 2022 թվականի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին»*** որոշումների նախագծերի թեմաներով:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Էդիկ Պիճիկյանը, քարտուղար Արմեն Հայրապետյանը, Աշխեն Մարուքյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 90-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»,***
2. ***«Բյուրեղավան համայնքի 2022 թվականի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին»***:

Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը ներկայացրեց, որ օրակարգի առաջին հարցը՝ « Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 90-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» մշակվել է՝ առաջնորդվելով «Նորմատիվ

իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի 2022 թվականի բյուջեի տարեվերջի ազատ մնացորդը՝ 231306,1 հազար դրամը (120720.7 հազար դրամը՝ վարչական բյուջեի տարեվերջի մնացորդ, 110585,4 հազար դրամը՝ ֆոնդային բյուջեի տարեվերջի մնացորդ), որն ամբողջությամբ ուղղվում է 2023 թվականի համայնքի բյուջեի ֆոնդային մաս, ինչպես նաև 2022 թվականին սուբվենցիոն ծրագրով նախատեսված «Հավերժության պուրակի» կառուցման համար պետական բյուջեից պետք է հատկացվեր 8283,7 հազար դրամ, սակայն չի հատկացվել տեղափոխվել է 2023 թվական, նշված գումարը ներառվել է համայնքի 2023 թվականի բյուջեի եկամուտների պետական բյուջեից կապիտալ նպատակային հատկացումների (սուբվենցիա) հոդվածով:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտություն է առաջացել համայնքի 2023 թվականի բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը)՝ «0,0» հազար դրամ փոփոխել «231306,1» հազար դրամով:

Բյուրեղավան համայնքի 2023 թվականի բյուջեի եկամուտների ընդհանուր գումարը կազմում է 429 401,4 հազար դրամ, իսկ ծախսերի ընդհանուր գումարը ծրագրվել է 660 707,5 հազար դրամ:

Նախատեսվում է համայնքի 2023 թվականի բյուջեով նախատեսված մանկապարտեզի շենքի կառուցում «49223,5» հազար դրամը փոփոխել «133700,0» հազար դրամով, մանկապատենական մարզադպրոցի կառուցման համար «50000,0» հազար դրամը փոփոխել «162500,0» հազար դրամով, բակային տարածքների բարեկարգում ու խաղահրապարակների կառուցումն ավելացնել 24429,6 հազար դրամով:

Որոշվեց՝

1. հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 90-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 2	Ձեռնպահ – 1	Դեմ- 0
Էդիկ Պիճիկյան	Աշխեն Մարուքյան	
Արմեն Հայրապետյան		

Լ. Պողոսյանը ներկայացրեց օրակարգի երկրորդ հարցը՝ ***«Բյուրեղավան համայնքի 2022 թվականի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին»*** որոշման նախագիծը: «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ (***Համայնքի***

ավագանին սույն օրենքով սահմանված կարգով հաստատում է համայնքի բյուջեն, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.) և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին (***Համայնքի ղեկավարը կազմում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի բյուջեի նախագիծը, դրանում առաջարկվող փոփոխություններն ու ապահովում է բյուջեի կատարումը, որի վերաբերյալ եռամսյա հաղորդումներ և տարեկան հաշվետվություն է ներկայացնում համայնքի ավագանուն.)*** կետերի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասի (***1. Համայնքի ղեկավարը եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում համայնքի ավագանուն և համապատասխան մարզպետին:***)՝ ավագանին որոշում է ի գիտություն ընդունել Բյուրեղավան համայնքի ղեկավարի հաղորդումը 2022 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին:

Որոշվեց՝

հավանություն տալ ***«Բյուրեղավան համայնքի 2022 թվականի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 2	Ձեռնպահ – 1	Դեմ- 0
Էդիկ Պիճիկյան	Աշխեն Մարուքյան	
Արմեն Հայրապետյան		

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Էդիկ Պիճիկյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Արմեն Հայրապետյան